



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 16/20**

27.11.2020թ.

ք. Երևան

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դիմող) թիվ ԵՇԴ/1231/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի և 04.10.2005 թվականին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Չնայած այն հանգամանքին, որ Դիմողը դիմումի՝ «Պահանջը» վերտառությամբ վերջնամասում նշել է, որ վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի և 04.10.2005 թվականին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 60, 64 և 70-րդ հոդվածներին, այնուամենայնիվ, դիմումի վերլուծությունից հանգում ենք նրան, որ Դիմողը վիճարկում է վերը նշված նորմերի համապատասխանությունը Սահմանադրության 60, 63 և 73-րդ հոդվածներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածից հետևում է, որ գույքային իրավունքները, այդ թվում՝ գույքի օգտագործման իրավունքը, ներառվում են «գույք» հասկացության մեջ, հետևաբար գույքային իրավունքները նույնպես սեփականության օբյեկտներ են, այսինքն՝ սեփականության անձեռնմխելիության կանոնները, այդ թվում՝ սեփականությունից զրկելը պետք է կատարվի համապատասխան կանոնների պահպանմամբ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի

համաձայն՝ «յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «գույք» եզրույթը Եվրոպական դատարանի կողմից շատ ավելի լայն է մեկնաբանվում, քան գուտ գույքային իրավունքը: Այնուհանդերձ, գույքային իրավունքը, մասնավորապես՝ բնակարանն օգտագործելու իրավունքը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի և ներպետական իրավունքի տեսանկյունից գույքային իրավունքը, գույք է:

Հատկապես, եթե նման իրավունքը հաստատված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, ապա դրանից զրկումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից մեծ հավանականությամբ գնահատվում է որպես սեփականությունից զրկում՝ որպես հետևանք առաջ բերելով պարտադիր փոխհատուցման և այլ անհրաժեշտ պայմանների պահպանման անհրաժեշտություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչված գույքային բովանդակություն ունեցող իրավունքների ճանաչումը որպես սեփականություն գնահատելու հարցում կիրառում է «գույքի ողջամիտ ակնկալիքի» հայեցակարգը:

Այսպես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռով ճանաչված փոխհատուցման իրավունքը մեկնաբանվել է որպես «ողջամիտ ակնկալիք», հետևաբար նաև գույք, մի շարք գործերում այդպիսին է համարվել պարտքի փոխհատուցման վերաբերյալ վճիռներով ճանաչված պահանջի իրավունքը:

Գույքի ողջամիտ ակնկալիքը սեփականություն է, եթե համապատասխան իրավական հիմք ունի ներպետական իրավունքում: Այլ կերպ ասած, եթե գույքային իրավունքն առաջանում է օրենքի հիման վրա, ապա այն պաշտպանվում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով:

Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների տրամաբանությամբ՝ բնակարանային օրենսգրքի հիման վրա ծագած իրավունքը գոյություն ունեցող իրային իրավունք է «ինչը ընկած է եղել սույն գործով պատասխանողի իրավունքի ճանաչման հիմքում», գույք է, հետևաբար և օգտվում է Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված երաշխիքներից: Մինչդեռ 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված օրենքի արդյունքում 2007 թվականից հետո այդ իրավունքը դադարում է իրենից որևէ նյութական արժեք ներկայացնել, «նյութական» իրավունք լինել, քանի որ հնարավորություն է տրվում սեփականատիրոջն իր հայեցողությամբ, փոխհատուցում չտրամադրելով, դադարեցնելու չգրանցված բնակելի տարածության օգտագործման իրավունքն առանց մտավախություն ունենալու այդ իրավունքի դիմաց փոխհատուցում տալու անհրաժեշտության մասին, մինչդեռ մինչ օրենսդրական փոփոխությունները բնակելի տարածության օգտագործման իրավունքը լիարժեք, նյութական բովանդակություն ունեցող գույքային իրավունք էր: Նշանակում է՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դադարում է «գոյություն ունեցող գույքային իրավունք» լինելուց:

Ըստ Դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի փոփոխությունների արդյունքում օրենքով այդ իրավունքի դադարեցումը հանգեցնում է սեփականությունից զրկման:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ եթե նույնիսկ այս դեպքում սեփականատիրոջ իրավունքին գերապատվություն տալը կատարվում է հանրային շահից ելնելով «ինչը պետականության հայեցողության տիրույթում է», գույքային իրավունքից, գույքից զրկումը չի կարող լինել անհատույց:

Եվրոպական դատարանն ընդունում է այն հանգամանքը, որ եթե գույքից զրկելիս փոխհատուցում չի տրամադրվում այն, որպես կանոն, հանգեցնում է գույքային իրավունքի խախտման: Օրինակ՝ Սուրբ Մենաստաններն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի կողմից հողատարածությունների փոխհատուցումը դիմումատու մենաստաններից Հունական պետությանը առանց փոխհատուցման համարվել էր գույքից զրկում՝ խախտելով 1-ին արձանագրության 1-ին հոդվածը:

Դիմողի համոզմամբ՝ սեփականության անձեռնմխելության էությունն ամբողջովին խախտվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի գոյության պայմաններում, և հակասություն է առաջանում Սահմանադրության 60-րդ հոդվածի հետ:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետներում քննության իրավունք:

Դիմողի գնահատմամբ՝ երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչված է անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքը, դրա գործողությունն ու դրանով պայմանավորված իրավական հետևանքները չեն կարող պայմանավորվել այլ լրացուցիչ գործոնի, այդ թվում՝ պետական գրանցման պահանջի հետ, քանի որ դրանով խախտվում է իրավական որոշակիության սկզբունքը: Դատական իշխանությունը և հատկապես արդարադատությունը իր օբյեկտիվ դրսևորումն ու արտացոլումը ստանում են դատական ակտերի միջոցով և դատական իշխանության հեղինակությունը, դրա նկատմամբ հարգանքը ենթադրում են նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ամրագրված պահանջների պահպանում, դրանցում առկա իրավական դիրքորոշումների պարտադիրություն, վերջնական դատական ակտը պարտադիր է ինչպես դրա հասցեատերերի, այնպես էլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համար և չի կարող կասկածի տակ դրվել վերջինիս ճշմարտացիությունը և դրա հեղինակությունը:

Իսկ այդ դեպքում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իրավունքը ճանաչվում է, սակայն այն մնում է միայն թղթի վրա գրված, ենթակա չէ կատարման, դրանով խախտվում է արդար դատաքննության իրավունքը և մասնավորապես դրա բաղադրատարբը հանդիսացող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության, իրավական որոշակիության *res judicata* սկզբունքը:

Արդյունքում, վիճարկվող իրավական նորմի գործողության պարագայում, մեր կարծիքով խախտվում է իրավական որոշակիության, դատական ակտի կայունության սկզբունքը այն պարագայում, երբ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, սակայն դատական ակտից

ծագող իրավունքները պետական գրանցում չեն ստացել, դրանով իսկ հակասության մեջ մտնելով Սահմանադրության 63-րդ հոդվածի հետ:

Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Սահմանադրությամբ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից:

Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով վիճարկվող նորմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի և հատկապես 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի «Անցումային դրույթներ» 2-րդ մասի սահմանադրականությանը՝ Դիմողը գտնում է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՀ օրենքով նախատեսված դրույթները, որոնց արդյունքում օրենքը տարածվում է այն օգտագործման իրավունքների վրա, որոնք ծագել են մինչև նշված օրենքի ընդունումը, անձի վիճակը վատթարացնող են, քանի որ փոխում են իրավատերերի գույքային իրավունքի բովանդակությունը, արդյունքում զրկում վերջիններիս բնակելի տարածության օգտագործման հնարավորությունից, եթե առկա չէ պետական գրանցում «թեև մինչև օրենքի ընդունումը պետական գրանցման առկայությունը իրավունքի գոյության համար որևէ նշանակություն չուներ», այսինքն՝ այդ նորմերը տարածելով մինչև օրենքի ընդունումը ծագած իրավունքների վրա՝ դրանով իսկ օրենքին հետադարձ ուժ է տալիս, որի արդյունքում քաղաքացիների վիճակը վատթարանում է՝ դրանով իսկ խախտելով նորմատիվ իրավական ակտերի հետադարձ ուժի կիրառման սկզբունքները, դրա էությունն ու միջազգային ընդունված արգելքներն ու բացառությունները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի և 04.10.2005 թվականին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 60, 63 և 73-րդ հոդվածներին:

Վիճարկվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքը ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքն անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է, որը չի կարող օտարվել, լինել գրավի, վարձակալության կամ անհատույց օգտագործման ինքնուրույն առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել այլ անձի ժառանգաբար կամ իրավահաջորդության կարգով:

Բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձի հետ առանց սեփականատիրոջ համաձայնության կարող են բնակվել նաև իր ընտանիքի անդամները (ամուսինը, անչափահաս երեխաները):

2. Բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը սահմանվում են սեփականատիրոջ հետ նոտարական կարգով վավերացված գրավոր պայմանագրով: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից:

3. Բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով:

4. Փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետևյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց

օգտագործման իրավունք ունեցող անձանց և սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից և ոչ ավելի 9 քառակուսի մետրից:

Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար և տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

04.10.2005 թվականին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Եթե անձը մինչև 1999 թվականի հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված (գրանցված) է եղել բնակելի տարածությունում և մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում, ապա մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմում ներկայացնելու դեպքում փոխհատուցումը կատարվում է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

Եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացվում է դատարան 2007 թվականի հունվարի 1-ից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձինք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Այսպես, Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ

1. օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում օրենսդիրը իրավունքի ծագման պարտադիր պայման է համարում օրինական ուժ մեջ մտած դատական ակտով ձեռք բերված գուքի անհատույց օտագործման իրավունքի պետական գրանցումը՝ խաթարելով անձի՝ արդար դատաքննության իրավունքը,

2. գուքի անհատույց օգտագործման իրավունքը դադարեցնելու դեպքում օրենսդրությամբ նախատեսված չէ սեփականատիրոջ կողմից գուքն անհատույց օգտագործողին համապատասխան փոխհատուցում տրամադրելու պայման այն դեպքում, երբ անձը գուքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքը ձեռք է բերել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, սակայն նշված իրավունքը չի ստացել պետական գրանցում:

Նախ, անդրադառնանք անձի՝ սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության իրավունքի և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անձի ձեռք բերած իրավունքի պետական գրանցման պարտադիր պահանջի հարաբերակցությանը:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս

անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Դատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է, տվյալ դեպքում, պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս:

Այսինքն՝ անձը պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզվատիմ ակնկալիքով:

Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հոչակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից: Ելնելով անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, անհրաժեշտ է նախադրյալներ ամրագրել դրա երաշխավորման ու ապահովման համար: Համապատասխան կարգավորման բացակայության կամ թերի կարգավորման պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել անձի՝ արդար դատաքննության իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես Սահմանադրության 63-րդ հոդվածի, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստից:

Անդրադառնալով Դիմողի այն կարծիքին, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ձեռք բերված իրավունքի պետական գրանցման պահանջի պարագայում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իրավունքը ճանաչվում է, սակայն այն մնում է միայն թղթի վրա գրված, ենթակա չէ կատարման, դրանով խախտվում է արդար դատաքննության իրավունքը և մասնավորապես դրա

բաղադրատարրը հանդիսացող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության, իրավական որոշակիության *res judicata* սկզբունքը, նշենք, որ, ընդհակառակը, օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հանդիսանում է իրավունքի ծագման հիմք և անձի կողմից նման դատական ակտ ներկայացվելու դեպքում անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող մարմինը պարտավոր է գրանցել դատական ակտով հաստատված իրավունքը՝ առանց կասկածի տակ դնելու դրա օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները սահմանված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի N ՀՕ-295 օրենքով:

Նշված օրենքը և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահանջն ինքնանպատակ չեն, այլ ուղղված են պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը:

Անշարժ գույքի պետական միասնական կադաստրը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի համար վարվող և կադաստրային քարտեզներում (հատակագծերում) անշարժ գույքի միավորների սահմանների նկարագրության վրա հիմնված անշարժ գույքի մասին տեղեկությունների համակարգված միասնական պետական ռեեստր է:

Պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝

1) պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը:

2) գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, գույքի կադաստրային գնահատման, հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը և կառավարումը.

3) գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տվյալների մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության և միասնականության ապահովումը.

4) անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցությունը («Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

Ավելին, *օրինական ուժի մեջ մտած դատական ակտը հանդիսանում է **իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ՝ օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթուղթ:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

2. Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ենթակա են՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, օգտագործման իրավունքը, հիփոթեքը, սերվիտուտները, ինչպես նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքները:

Անդրադառնալով սեփականության իրավունքին՝ Սահմանադրական դատարանը 2008 թվականի մարտի 18-ի թիվ ՄԴՈ-741 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները: Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում, որպես իրավական պետություն, գործում է միասնական և համակարգված մոտեցում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պարտադիր պետական գրանցման առումով, որի նպատակն է պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների,

սահմանափակումների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը, իրավական որոշակիությունը: Նման կարգավորումը կոչված է առանց բացառությունների և խտրականությունների միասնական մոտեցում դրսևորել անշարժ գույքի նկատմամբ որոշակի իրավունք ձեռք բերած անձանց նկատմամբ, երաշխավորել պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովումը: Դա է հանդիսանում պատճառը նաև այն կարգավորման, համաձայն որի՝ բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով: Կարգավորումն ունի 2 կողմ. մի կողմից՝ գույքի նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող անձի իրավունքների պաշտպանությունն է, մյուս կողմից՝ գույքի սեփականատիրոջ իրավունքները:

Պետությունը գույքի նկատմամբ սեփականության և օգտագործման իրավունքի պետական գրանցում նախատեսելու հետ միաժամանակ ապահովել է նաև անհրաժեշտ բոլոր պայմանները նշված իրավունքների պետական գրանցման համար (նախատեսելով, որ պետական գրանցում կարող են ստանալ նաև այն իրավունքները, որոնք ծագել են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի ընդունումից առաջ՝ անկախ ժամկետից): Այսինքն՝ պետությունը անձանց իրավունքներն առավել արդյունավետ պաշտպանելու համար ներդրել է սեփականության իրավունքի գրանցման ինստիտուտը. իրավունքի պետական գրանցման փաստաթուղթը հանդիսանում է այն երաշխիքը, որ նշված իրավունքը պատկանում է կոնկրետ անձի և պաշտպանված է ցանկացած ոտնահարումից:

Բացի դա, գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի դադարեցման մասի խոսելիս անհրաժեշտ է ուշադրության արժանացնել նաև տվյալ իրավահարաբերության մյուս կողմի՝ գույքի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը: Կարծում ենք՝ գույքի սեփականատիրոջ իրավունքների ոտնահարում կլինի փոխհատուցում նախատեսել այն դեպքում, երբ վերջինիս գույքից այլ անձի օգտագործման իրավունքը

պետական գրանցում չի ստացել, քանի որ կստացվի, որ վերջինիս վրա պարտավորություն է դրվում փոխհատուցում տալ մի իրավունքի դադարեցման համար, որն ըստ էության չի էլ ծագել (ինչպես օրինակ՝ անշարժ գույքի ձեռքբերման պահից 30-օրյա ժամկետում սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման, հակառակ դեպքում՝ գործարքը համարվում է առոչինչ, և այստեղ գույք ձեռք բերողի իրավունքների պաշտպանությունից խոսելը հիմնագուրկ է):

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ կարգավորումը, համաձայն որի՝ գույքի անհատույց օգտագործման իրավունքը դադարեցնելու դեպքում օրենսդրությամբ նախատեսված չէ սեփականատիրոջ կողմից գույքն անհատույց օգտագործողին համապատասխան փոխհատուցում տրամադրելու պայման այն դեպքում, երբ անձը գույքի նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքը ձեռք է բերել օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, սակայն նշված իրավունքը չի ստացել պետական գրանցում, բխում է սեփականության ինստիտուտի պետական երաշխավորման և պաշտպանության էությունից, կոչված է միասնական հարթակ ստեղծելու իրավունքների պետական գրանցման համար, պաշտպանելու գույքի սեփականատիրոջ իրավունքները անհարկի պարտավորություններից և պայմաններից, ձևավորելու միատեսակ իրավակիրառ պրակտիկա, իրավունքների իրացման հստակություն և որոշակիություն:

Անփոփելի վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը և 04.10.2005 թվականին ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-188-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 60, 63 և 73-րդ հոդվածներին:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան